Դարձերես՝ մանուկ Հիսուսն իր մոր՝ Մարիամի հետ, և մոգերը, որոնք նրան նվերներ են մատուցում:

Adoration of the Magi

When Jesus Christ was born in Bethlehem his star appeared bright in the sky to the East. Guided by the star, the magi came up to where the Child Jesus was. As they saw the newborn with his mother Mary they fell on their knees, paid worship and presented gold, incense and balm symbolizing, accordingly, the lordship of Jesus, his being of God, and his passion, death and resurrection.

Reverse: the Child Jesus with Mary as well as the magi giving presents to him.



Մուտ Երուսաղեմ

Զատկից մեկ շաբաթ առաջ Հիսուս Քրիստոսն իր աշակերտների ուղեկցությամբ հանդիսավոր մուտ է գործում Երուսաղեմ: Հայկական մանրանկարներում այս տեսարանը պատկերում է ավանակի վրա նստած, հաղթին մոտեցող Քրիստոսին՝ օրհնող աջը բարձրացրած: Նրան հետևում են աշակերտները, իսկ առջևում Երուսաղեմի բնակիչներն են, որոնք հագուստներ և ճյուղեր են նետում նրա ոտքերի տակ: «Մուտ Երուսաղեմ» տոնը համընկնում է բնության զարթոնքի հետ: Հայաստանյայց առաքելական եկեղեցին տոնն անվանել է Ծաղկազարդ:

Դարձերես՝ Քրիստոսը՝ օրհնող աջը բարձրացրած. նրան հետևում են աշակերտները, իսկ առջևում Երուսաղեմի բնակիչներն են:

Entry to Jerusalem

A week before Easter Jesus Christ, accompanied with his disciples, made a solemn entry to Jerusalem. In Armenian miniatures this event portrays Jesus sitting on a donkey and approaching the town, with his right hand up for blessing. Behind are the followers while inhabitants of Jerusalem in front of him throw garments and branches on the road. This merriment of entry to Jerusalem coincides with commencement of springtime and awakening of nature. The Armenian Apostolic Church named this celebration Tsaghkazard (Palm Sunday).

Reverse: Jesus with his right hand up for blessing; behind are the followers, in front of him - inhabitants of Jerusalem.



Համբարձում

Համբարձումը հարությունն առած Հիսուս Քրիստոսի՝ աշակերտներին հայտնվելուց, օրեր շարունակ նրանց հետ շրջելուց ու պատվիրաններ տալուց հետո, դեպի երկինք Հայր Աստծո մոտ համբարձվելն է: Համբարձումով ճանապարհվում է Հիսուս Քրիստոսի երկրային առաքելության փառավոր ավարտը:

Դարձերես՝ Հիսուս Քրիստոսը և հրեշտակները, որոնք դեպի երկինք են տեղափոխում Հիսուսին: Նա գահի վրա նստած՝ աջով օրհնում է աշակերտներին, իսկ ձախ ձեռքին պահում է գալարափաթեթ:

Ascension

Ascension is Jesus Christ's ascent into heaven, to the Heavenly Father, after his resurrection and appearing to the disciples, taking several days of walk with them and giving commandments to them. The event of Ascension signifies glorious ending of Jesus Christ's mission on earth.

Reverse: Jesus and the angels that take Jesus to the Heaven. Seated on the throne, Jesus is blessing his disciples with his right hand while holding the roll in the left hand.

«Հայաստանի խաչքարեր»

(6 հուշադրամ)

"Cross-stones (khachkars) of Armenia"

(6 *collector coins*)





Շարքը նվիրված է Հայաստանի խաչքարերին և ներառում է «Էջմիածնի խաչքար», «Կեչառիսի խաչքար», «Գնդեվանքի խաչքար», «Գոշավանքի խաչքար», «Նորավանքի խաչքար», «Սանահինի խաչքար» հուշադրամները:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2011:

Հուշադրամների շարքը ներկայացվել է «Դրամների համաստեղություն-2012» 6-րդ միջազգային մրցույթին (ՌԴ) և զբաղեցրել երկրորդ տեղը՝ «Տարվա շարք» անվանակարգում:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	սովորական (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2 500 հատ յուրաքանչյուր տեսակից

The series is dedicated to the cross-stones of Armenia and comprises "The Etchmiadzin cross-stone", "The Kecharis cross-stone", "The Gndevank cross-stone", "The Goshavank cross-stone", "The Noravank cross-stone" and "The Sanahin cross-stone" collector coins.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Minted in the Mayer Mint, Germany.

Year of issue 2011.

In the 6th international competition "Coin Constellation-2012" (RF) the coin series won the second place in the nomination "Series of the Year".

Nominal value	1 000 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	25,0 g
Size	27,0 x 47,0 mm
Quality	uncirculated (antique-finish)
Edge	ribbed
Quantity	up to 2 500 pcs per type



Էջմիածնի խաչքար

Խաչքարը գտնվում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տարածքում: Խաչքարի խաչը զարդարված է խաղողի ողկույզներով և արմավենու տերևներով:

Դարձերես՝ խաչքարի մանրակերտը՝ պատրաստված բաղադրյալ մարմարից, Սբ. Էջմիածնի Մայր տաճարը, խաչեր և նախշեր:

The Etchmiadzin Cross-stone

The cross-stone is placed in the territory of the Mother See of Holy Etchmiadzin. The cross of this cross-stone is decorated by grapes bunches and palm leaves.

Reverse: a miniature copy of the cross-stone made of compound marble, the Mother Cathedral of Holy Etchmiadzin, crosses and decorative patterns.



Կեչառիսի խաչքար

Խաչքարը գտնվում է Կեչառիսի վանական համալիրի տարածքում: Կեչառիսի խաչքարերին հատուկ է ներքևի մասում փորագրված ստիճանաձև պատվանդանը և գագաթը երիզող ֆիլը:

Դարձերես՝ խաչքարի մանրակերտը՝ պատրաստված բաղադրյալ մարմարից, Կեչառիսի վանական համալիրը, խաչեր և նախշեր:

The Kecharis Cross-stone

The cross-stone is placed in the territory of the Kecharis monastery complex. The cross-stones of Kecharis are marked out by a stepped pedestal engraved at the bottom and a cornice framing the top.

Reverse: a miniature copy of the cross-stone made of compound marble, Kecharis, crosses and decorative patterns.



Գնդեվանքի խաչքար

Խաչքարը գտնվում է Գնդեվանքի վանական համալիրի տարածքում: Այստեղ հանդիպում են Վայոց ձորում բավականին տարածում գտած փոքր չափերի ուղղանկյուն խաչքարեր, որոնցում խաչը վերևից ու ներքևից հարդարված է շեղ արմավազարդերով:

Դարձերես՝ խաչքարի մանրակերտը՝ պատրաստված բաղադրյալ մարմարից, Գնդեվանքը, խաչեր և նախշեր:

The Gndevank Cross-stone

The cross-stone is placed in the territory of the Gndevank monastery complex. Here some rectangular cross-stones of small sizes widely spread in Vayots Dzor can be found. The upper and lower parts of the crosses of these cross-stones are decorated with luxurious palmette.

Reverse: a miniature copy of the cross-stone made of compound marble, Gndevank, crosses and decorative patterns.



Գոշավանքի խաչքար


Գոշավանքի համալիրի տարածքում են գտնվում Պողոս վարպետի երկու «ասեղնագործ» խաչքարերը, որոնք աչքի են ընկնում կատարման վարպետությամբ՝ նրբահյուս վարդյակով և երկու կողմերում բազմաթել հյուսածո լայն ժապավեններով կազմվող շեղ արմավազարդով:

Դարձերես՝ խաչքարերից մեկի մանրակերտը՝ պատրաստված բաղադրյալ մարմարից, Գոշավանքը, խաչեր և նախշեր:

The Goshavank Cross-stone

The Goshavank monastery complex has two "embroidered" cross-stones authored by Poghos the Master. The cross-stones are famous with their perfect creativity in the form of nice rosace lacework and wide ribbon-like palmette on either side.

Reverse: a miniature copy of one of the cross-stones made of compound marble, Goshavank, crosses and decorative patterns.



Նորավանքի խաչքար

Խաչքարը գտնվում է Նորավանքի վանական համալիրի տարածքում: Նորավանքում պահպանվել են բազմաթիվ խաչքարեր, որոնցից մի քանիսն առանձնանում են կատարյալ տեխնիկայով և հորինվածքային ամբողջականությամբ:

Դարձերես՝ խաչքարի մանրակերտը՝ պատրաստված բաղադրյալ մարմարից, Նորավանքը, խաչեր և նախշեր:

The Noravank Cross-stone

The cross-stone is placed in the territory of the Noravank monastery complex. Many cross-stones can be found inside Noravank. Some of them stand out for their perfect technique and creative integrity.

Reverse: a miniature copy of the cross-stone made of compound marble, Noravank, crosses and decorative patterns.



Սանահինի խաչքար

Հայաստանի միջնադարյան արվեստի լավագույն քարակերտ նմուշներից է Գրիգոր Տուտեորդու կերտած խաչքարը (1184 թ.), որը գտնվում է Սանահինի վանքում՝ Սբ. Հարությունն եկեղեցու հյուսիսային պատի տակ:

Դարձերես՝ խաչքարի մանրակերտը՝ պատրաստված բաղադրյալ մարմարից, Սանահինի վանքը, խաչեր և նախշեր:

The Sanahin Cross-stone

The cross-stone created by Grigor Touteordi (1184) is placed in the territory of the Sanahin monastery complex at the northern wall of St Haroutiun Church. It is one of the best examples of the Armenian sculptural creativity of the Middle Ages.

Reverse: a miniature copy of the cross-stone made of compound marble, Sanahin, crosses and decorative patterns.

Հայ գրքի տպագրության 500-ամյակ

Հուշադրամը նվիրված է հայ գրքի տպագրության 500-ամյակին: Հայ առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրվել է Վենետիկում 1512 թ.: Տպագրիչն է Հակոբ Մեղապարտը, տառատեսակը՝ բոլորգիր, տպագրությունը՝ երկգույն՝ սև ու կարմիր:

Դիմերես՝ «Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների պատկերանիշը:

Դարձերես՝ տեսարան Վենետիկից, Հակոբ Մեղապարտի նշանադրոշմը, «Ուրբաթագիրքը» և գրքից մի պատկեր՝ «Հիվանդի այցը»:

Էսքիզների հեղինակ՝ Վարդան Վարդանյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2012:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	արծաթ, 925⁰
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

500th Anniversary of Armenian Book Printing

The coin is dedicated to the 500th anniversary of Armenian book printing. The first Armenian print book, Urbatagirq, was produced in Venice, Italy, in 1512, by Hakob Meghapart. The font of the book is orbicular and the printing bi-colored (black and red).

Obverse: the logotype of celebrations dedicated to announcing Yerevan the worldwide capital of the book.

Reverse: one of the sights of Venice, the stamp mark of the first Armenian printer, "Urbatagirq" and a picture "Patient visit" from the book.

Designed by Vardan Vardanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 2012.

Nominal value	1 000 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	33,6 g
Diameter	40,0 mm
Quality	proof
Edge	ribbed
Quantity	500 pcs





Գիտություն, գրականություն, արվեստ
Science, Literature, Art





Մատենադարանի հիմնադրման 50-ամյակ

Հուշադրամը նվիրված է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հիմնադրման 50-ամյակին: Մատենադարանը ձեռագիր և տպագիր մասյաններ ուսումնասիրումը, պահպանումը և օգտագործումը կազմակերպող հիմնարկություններից խոշորագույնն է: Հավաքածուն ընդգրկում է ավելի քան 17 000 հին ձեռագրեր և 100 000 արխիվային փաստաթղթեր:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը և Մատենադարանի շքամուտի դռան զարդանախշից մի հատված:

Դարձերես՝ Մատենադարանի շենքը:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

Հատվել է Չեխիայի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2007:

Անվանական արժեքը	1 957 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

50th Anniversary of Establishment of Matenadaran

The coin is dedicated to the 50th anniversary of establishment of the Yerevan Matenadaran named after Mesrop Mashtots. Matenadaran is the ultimate establishment that studies, maintains and uses printed and manuscript books. This is a repository of more than 17 000 old manuscripts and 100 000 archived documents.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia and a fragment from the ornament engraved on the entrance of Matenadaran.

Reverse: the building of Matenadaran.

Designed by Eduard Kurghinyan.

Minted in the Czech Mint.

Year of issue 2007.

Nominal value	1 957 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	33,6 g
Diameter	40,0 mm
Quality	proof
Edge	ribbed
Quantity	500 pcs





Օպերայի և բալետի թատրոնի հիմնադրման 75-ամյակ

Հուշադրամը նվիրված է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 75-ամյակին: Թատրոնը բացվել է Սպենդիարյանի «Ալմաս» օպերայով (1933 թ. հունվարի 20): Թատրոնի ստեղծագործական նվաճումներից են՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Տ. Ջուխաջյանի «Արշակ Բ» օպերաները, Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետը և բազմաթիվ այլ հանրահայտ ստեղծագործություններ:

Դիմերես՝ Ա. Սպենդիարյանի արձանը՝ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի ֆոնի վրա:

Դարձերես՝ երկու բալետի պարողներ և տարբեր երաժշտական գործիքներ:

Էսքիզների հեղինակներ՝ Հարություն Սամուելյան (դիմերես) և Էդուարդ Կուրղինյան (դարձերես):

Հատվել է Չեխիայի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2008:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

75th Anniversary of the Opera and Ballet Theater

The coin is dedicated to the 75th anniversary of foundation of A. Spendiarian Opera and Ballet National Academic Theater. The Opera and Ballet Theater started off by Spendiarian's opera "Almast" on January 20, 1933. Outstanding staging and creative achievements include opera "Anoush" by A. Tigranyan, "Arshak B" by T. Chukhajyan, ballet "Gayane" by A. Khachatryan and many other well-known works.

Obverse: the statue to A. Spendiarian against the background of the Opera and Ballet Theater building.

Reverse: two ballet dancers and various musical instruments.

Designed by Haroutiun Samuelian (obverse) and Eduard Kurghinyan (reverse).

Minted in the Czech Mint.

Year of issue 2008.

Nominal value	1 000 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	33,6 g
Diameter	40,0 mm
Quality	proof
Edge	ribbed
Quantity	500 pcs

Հովհաննես Այվազովսկի

Հուշադրամը նվիրված է հայազգի ափսարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն (1817-1900 թթ.):

Դիմերես՝ ՀՀ զինանշանը և դրվագ Հովհաննես Այվազովսկու «Փոթորիկ» կտավից:

Դարձերես՝ Հովհաննես Այվազովսկու դիմադիմակերը և դրվագ «Չեսմենյան ծովամարտ» կտավից:

Էսքիզների հեղինակ՝ Ռոբերտ Կոտովիչ:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2006:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	մինչև 5 000 հատ

Հուշադրամը ներկայացվել է «Դրամների համաստեղություն-2007» միջազգային մրցույթին (ՌԴ) և ճանաչվել լավագույնը «Օրիգինալ տեխնոլոգիա» անվանակարգում:





Hovhannes Aivazovsky

The coin is dedicated to the renowned Armenian seascape painter Hovhannes Aivazovsky (1817-1900).

Obverse: the coat of arms of the Republic of Armenia and a fragment from the canvas "Storm" by Aivazovsky.

Reverse: the portrait of Hovhannes Aivazovsky and a fragment from the canvas "Chesmen Battle" by Aivazovsky.

Designed by Robert Kotowicz.

Minted in the Mint of Poland.

Year of issue 2006.

Nominal value	100 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	28,28 g
Size	28,0 x 40,0 mm
Quality	brilliant uncirculated
Edge	even
Quantity	up to 5 000 pcs

In the international competition "Coin Constellation-2007" (RF) the coin was named as the best in the nomination "Original Technology".

Թեոդոր Ախենցովիչ

Հուշադրամը նվիրված է հայազգի լեհ նկարիչ Թեոդոր Ախենցովիչին (1859-1938 թթ.): Որպես նկարիչ հայտնի էր կենդանության որոշ ժամանակաշրջանում, բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ է բացել աշխարհի տարբեր երկրներում:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը և Ախենցովիչի՝ կնոջ դիմանկար պատկերող կտավից մի դրվագ:

Դարձերես՝ Ախենցովիչի դիմանկարը (1907 թ.) և կտավից մի հատված՝ իր ստորագրությամբ:

Էսքիզների հեղինակ՝ Ուրսուլա Վալեժակ:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2010:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաձուրքը	հարթ
Տպաքանակը	մինչև 4 000 հատ





Teodor Axentowicz

The coin is dedicated to the Polish painter of Armenian origin Teodor Axentowicz (1859-1938). As a painter he was famous during his lifetime and organized individual exhibitions in different parts of the world.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia and the Axentowicz's canvas portraying a woman.

Reverse: the portrait of Axentowicz (1907), his signature and a fragment from the canvas.

Designed by Urszula Walerzak.

Minted in the Mint of Poland.

Year of issue 2010.

Nominal value	100 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	28,28 g
Size	28,0 x 40,0 mm
Quality	proof
Edge	even
Quantity	up to 4 000 pcs

Ջազ





Հուշադրամը նվիրված է Հայաստանում լայն տարածում ստացած երաժշտական ժանրին՝ ջազին: Հայաստանում առաջին ջազային նվագախումբը ստեղծվել է 1938 թ.՝ կոմպոզիտոր, թավջութակահար Արտեմի Այվազյանի ղեկավարությամբ:

Դիմերես՝ ջազային նվագախումբ և ոճավորված ջազային գործիքներ:

Դարձերես՝ ոճավորված ջազային գործիքներ:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

Հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2010:

Հուշադրամը ներկայացվել է «Դրամների համաստեղություն-2011» 5-րդ միջազգային մրցույթին (ՌԴ) և զբաղեցրել երրորդ տեղը՝ «Գեղարվեստական հաջող լուծում» անվանակարգում:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	28,28 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 10 000 հատ

Jazz

The coin is dedicated to jazz - a music genre widely spread in Armenia. The first jazz band in Armenia was formed in 1938. It was directed by a composer cellist Artemy Aivazyan.

Obverse: a jazz band with stylized instruments for jazz.

Reverse: stylized instruments for jazz.

Designed by Eduard Kurghinyan.

Minted in the Mayer Mint, Germany.

Year of issue 2010.

In the 5th international competition "Coin Constellation-2011" (RF) the coin won the third place in the nomination "Successful Artistic Solution".

Nominal value	1 000 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	28,28 g
Diameter	38,61 mm
Quality	proof
Edge	ribbed
Quantity	up to 10 000 pcs

Սերգեյ Փարաջանով

Հուշադրամը նվիրված է հայտնի կինոռեժիսոր, նկարիչ, կոլաժի վարպետ Սերգեյ Փարաջանովին (Սարգիս Փարաջանյանց 1924-1990 թթ.):

Դիմերես՝ Փարաջանովը՝ կինոխցիկով, և հատված Փարաջանովի կոլաժից:

Դարձերես՝ Փարաջանովի դիմապատկերը, հատված «Ֆաբերժեի հիշատակին» կոլաժից և նկարչի ինքնաիիող usորագրությունը:

Էսիզների հեղինակ՝ Ուրսուլա Վալեժակ:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2012:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Դրամատուրքը	հարթ
Որակը	պրուֆ
Տպաքանակը	մինչև 5 555 հատ



Sergey Parajanov

The coin is dedicated to Sergey Parajanov (Sargis Parajanyants, 1924-1990), a famous film director, artist, master of collage.

Obverse: a fragment from one of the collages by Sergey Parajanov and Parajanov with a camera.

Reverse: the portrait of Parajanov, a fragment from "In memory of Faberge" collage and his original signature.

Designed by Urszula Walerzak.

Minted in the Mint of Poland.

Year of issue 2012.

Nominal value	100 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	28,28 g
Size	28,0 x 40,0 mm
Edge	even
Quality	proof
Quantity	up to 5 555 pcs

Դիցաբանություն
Mythology





Անահիտ

Հուշադրամը նվիրված է հեթանոսական Անահիտ աստվածուհուն: Անահիտը համարվել է հայոց մայր աստվածուհին, բերրի, ոչղաբերության, արգասավորության սրբազան մարմնավորումը:

«Անահիտ Աստվածուհի» հուշադրամը ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված առաջին ոսկե հուշադրամն է:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Անահիտ աստվածուհու դիմանկարը:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1997:

Անվանական արժեքը	25 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900⁰
Քաշը	4,3 գ
Տրամագիծը	18,0 մմ
Ռակը	լավացված
Դրամատուրթը	հարթ
Տոպրաքանակը	500 հատ

Anahit

The coin is dedicated to the pagan Goddess Anahit. Anahit has been considered the Mother Goddess of Armenians, the sacred embodiment and patron for the crop, fruitfulness and fertility.

"Goddess Anahit" is the first gold collector coin issued by the Central Bank of Armenia.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the bust of Goddess Anahit.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1997.

Nominal value	25 000 dram
Metal and alloy	gold, 900⁰
Weight	4,3 g
Diameter	18,0 mm
Quality	brilliant uncirculated
Edge	even
Quantity	500 pcs

Նոյի վայրէջքը Արարատից



Հուշադրամը նվիրված է Նոյի վայրէջքը Արարատից բիբլիական սյուժեին:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Նոյն իր ընտանիքով՝ Արարատ լեռան ֆոնի վրա, և ճյուղը կտցին աղավնու պատկեր:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1999:

Անվանական արժեքը	100 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900⁰
Քաշը	17,2 գ
Տրամագիծը	30,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	հարթ, համարակալված
Տպաքանակը	1 000 հատ

Noah descending from Ararat

The coin is dedicated to the biblical story describing Noah's descent from Ararat.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: Noah's family against the background of the Mountain Ararat and a pigeon holding a branch in the beak.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1999.

Nominal value	100 000 dram
Metal and alloy	gold, 900⁰
Weight	17,2 g
Diameter	30,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	1 000 pcs

Հայկ Նահապետ

Հուշադրամը նվիրված է Հայկ Նահապետին: Հայկը, համաձայն հայոց դիցավեպի, հայ ժողովրդի անվանադիր նախնին է: Հայկական ցեղերը, իրենց համարելով Հայկի սերունդ, երկիրը կոչել են Հայք:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը և Օրիոն համաստեղությունը:

Դարձերես՝ Երևանում տեղադրված Հայկ Նահապետի արձանը (քանդակագործ՝ Կ. Նուրիջանյան):

Էսքիզների հեղինակներ՝ Էդուարդ Կուրղինյան (դիմերես) և Հարություն Սամուելյան (դարձերես):

Հատվել է Չեխիայի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2007:

Անվանական արժեքը	5 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900⁰
Քաշը	4,3 գ
Տրամագիծը	18,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	3 000 հատ





Haik Nahapet

The coin is dedicated to Haik Nahapet, the forefather of the Armenians. According to the ancient Armenian epos Armenian tribes considered themselves as Haik's generation and therefore named their land "Haiq".

Obverse: the coat of arms of the Republic of Armenia and the Orion constellation.

Reverse: the monument to Haik Nahapet in Yerevan (sculpture K. Nurijanyan).

Designed by Eduard Kurghinyan (obverse) and Haroutiun Samuelian (reverse).

Minted in the Czech Mint.

Year of issue 2007.

Nominal value	5 000 dram
Metal and alloy	gold, 900⁰
Weight	4,3 g
Diameter	18,0 mm
Quality	brilliant uncirculated
Edge	ribbed
Quantity	3 000 pcs

Կրոն
Religion









Սբ. Էջմիածին

Հուշադրամները նվիրված են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Սբ. Էջմիածնի Մայր տաճարը, որը կառուցվել է 301-303 թթ., հետագայում դարձել հայոց քրիստոնեական կենտրոն և Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստը:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել են Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1998:

Անվանական արժեքը	10 000 դրամ 1 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	ոսկի, 900⁰ արծաթ, 999⁰
Քաշը	8,6 գ / 31,1 գ
Տրամագիծը	22,0 մմ / 38,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	հարթ, համարակալված
Տպաքանակը	1 700 հատ յուրաքանչյուր տեսակից

Holy Etchmiadzin

The coins are dedicated to the 1700th anniversary of adoption of Christianity as state religion in Armenia.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the Mother Cathedral of Holy Etchmiadzin, which was built in 301-303 to have later become the center of Armenian Christianity and the Seat of the Patriarch of All Armenians.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1998.

Nominal value	10 000 dram 1 000 dram
Metal and alloy	gold, 900⁰ silver, 999⁰
Weight	8,6 g / 31,1 g
Diameter	22,0 mm / 38,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	1 700 pcs per type

Անի

Հուշադրամները նվիրված են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Անիի Աբուղամրենց Սբ. Գրիգոր եկեղեցին:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել են Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1998:

Անվանական արժեքը	10 000 դրամ 1 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	ոսկի, 900⁰ արծաթ, 999⁰
Քաշը	8,6 գ / 31,1 գ
Տրամագիծը	22,0 մմ / 38,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ, համարակալված
Տպաքանակը	1 700 հատ յուրաքանչյուր տեսակից









Ani

The coins are dedicated to the 1700th anniversary of adoption of Christianity as state religion in Armenia.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the church of St Grigor Abughamrents of Ani.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1998.

Nominal value	10 000 dram 1 000 dram
Metal and alloy	gold, 900⁰ silver, 999⁰
Weight	8,6 g / 31,1 g
Diameter	22,0 mm /38,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	1 700 pcs per type

Հաղպատ





Հուշադրամը նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Հաղպատը X-XIII դդ. Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոններից էր, խոշոր վանական հաստատություն՝ հարուստ բազմաթիվ զեղահանդակ խաչֆարերով:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Հաղպատի խաչֆարերից մեկը:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1998:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999⁰
Քաշը	31,1 գ
Տրամագիծը	38,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	հարթ, համարակալված
Տպաքանակը	1 700 հատ

Haghpat

The coin is dedicated to the 1700th anniversary of adoption of Christianity as state religion in Armenia. Haghpat Monastery was a leading spiritual and cultural center in the period of 10-13th centuries, a major monk institution with a great variety of ornamented cross-stones.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: one of the cross-stones of Haghpat.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1998.

Nominal value	1 000 dram
Metal and alloy	silver, 999⁰
Weight	31,1 g
Diameter	38,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	1 700 pcs

Աղթամար

Հուշադրամները նվիրված են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Աղթամար կղզում գտնվող Սբ. Խաչ եկեղեցին (915-921 թթ.):

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել են Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1999:

Անվանական արժեքը	50 000 դրամ 5 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	ոսկի, 900⁰ արծաթ, 999⁰
Քաշը	8,6 գ / 31,1 գ
Տրամագիծը	22,0 մմ / 38,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ, համարակալված
Տպաքանակը	1 700 հատ յուրաքանչյուր տեսակից






Aghtamar

The coins are dedicated to the 1700th anniversary of adoption of Christianity as state religion in Armenia.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the church Holy Cross (915-921) located in the island Aghtamar.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1999.

Nominal value	50 000 dram 5 000 dram
Metal and alloy	gold, 900⁰ silver, 999⁰
Weight	8,6 g / 31,1 g
Diameter	22,0 mm / 38,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	1 700 pcs per type

Սբ. Սարգիս զորավար




Հուշադրամը նվիրված է Սբ. Սարգիս զորավարին: Ըստ ավանդության՝ նահատակվել է քրիստոնեական հավատի համար և դասվել սրբերի կարգը: Սբ. Սարգսի պաշտամունքը մեծ տարածում է ստացել հայերի մեջ. նրա անունով եկեղեցիներ են հիմնվել Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում:

Դիմերես՝ խաչերով ձևավորված զարդանախշ:

Դարձերես՝ վիշապին հաղթող Սբ. Սարգիսը՝ ձիույգի վրա:

Էսքիզների հեղինակ՝ Կարապետ Աբրահամյան:

Հատվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2009:

Անվանական արժեքը	5 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900⁰
Քաշը	4,3 գ
Տրամագիծը	18,0 մմ
Որակը	լավացված ատամնավոր
Դրամաշուրթը	
Տպաքանակը	5 000 հատ

St Sargis the Commander

The coin is dedicated to St Sargis the Commander. According to a legend St Sargis the Commander was martyred for Christian Faith and has therefore been sanctified. As St Sargis was widely worshipped among Armenians, churches dedicated to him were built in many Armenian settlements.

Obverse: an ornament with crosses.

Reverse: St Sargis on a horseback beating the dragon-snake with his spear.

Designed by Karapet Abrahamyan.

Minted in the Mint of Finland.

Year of issue 2009.

Nominal value	5 000 dram
Metal and alloy	gold, 900⁰
Weight	4,3 g
Diameter	18,0 mm
Quality	brilliant uncirculated
Edge	ribbed
Quantity	5 000 pcs

XX դարի հայոց կաթողիկոսներ

Հուշադրամը նվիրված է 20-րդ դարի հայոց կաթողիկոսներին: Հիսուս Քրիստոսի առաքյալներից Սբ. Թադեոսի և Սբ. Բարդուղիմեոսի քարոզչությամբ հիմնված Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու գլուխն է Ամենայն Հայոց կաթողիկոսը: Եկեղեցու հոգևոր կենտրոնը Մայր Աթոռ Սբ. Էջմիածինն է, որտեղ և գտնվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը:

Հայոց առաջին կաթողիկոսն է եղել Սբ. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը, որի քարոզչության շնորհիվ 301 թ. առաջինն աշխարհում քրիստոնեությունը Հայաստանում հռչակվել է պետական կրոն: Լուսավորչի գահին կաթողիկոսները հաջորդել են իրար: Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը 132-րդ գահակալն է Լուսավորչահաստատ Մայր Աթոռի (1999 թ-ից առ այսօր):



Armenian Patriarchs of the 20th Century

This coin is dedicated to Armenian patriarchs of the 20th century. The Patriarch of All Armenians, whose seat and spiritual center is Holy See of Etchmiadzin, Armenia, is the head of the Holy Armenian Apostolic Church, founded by the evangelization of St Thaddeus and St Bartholomew - two of the twelve apostles of Jesus Christ. St Grigor Lusavorich (St Gregory the Illuminator) was the first catholicos of the Armenians and principal advocate for proclaiming Christianity as state religion in Armenia in the year 301 - the first nation in the world to do so. Over the centuries, each catholicos has succeeded his predecessor to the throne of St Gregory. His Holiness Garegin B is the 132nd Supreme Patriarch of All Armenians (1999 up to date).





Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Սբ. Էջմիածնի Մայր տաճարը, XX դարի հայոց կաթողիկոսների դիմապատկերները, նրանց անուններն ու կաթողիկոսության ժամանակահատվածը:

Էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2008:

Անվանական արժեքը	1 000 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999⁰
Քաշը	1 կգ
Տրամագիծը	90,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	հարթ, համարակալված, գրվածքով
Տպաքանակը	25 հատ

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the Mother Cathedral of Holy Etchmiadzin, the Armenian Catholicoi of the 20th century, their names and period of their Holiness.

Designed by Haroutiun Samuelian.

Minted in the Mint of Poland.

Year of issue 2008.

Nominal value	1 000 000 dram
Metal and alloy	gold, 999⁰
Weight	1 kg
Diameter	90,0 mm
Quality	proof
Edge	even, numbered, inscribed
Quantity	25 pcs

Տ. Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմեան Հայրիկ, 1820 թ., Վան - 1907 թ., Վաղարշապատ)

1892 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

Խոշոր հոգևոր-եկեղեցական գործիչ էր և աչքի է ընկել որպես ազգի շահերի ջերմ պաշտպան, հայրենիքի ազատության, հոգևոր-մշակութային լուսավորության ջատագով և Հայ առաքելական եկեղեցու բարեփոխիչ: Իր ազգասիրության և մեծ ժողովրդականության շնորհիվ մեծարվել է «Հայրիկ» պատվանունով:

His Holiness Mkrtich I Khrimyan of Van (1820, Van - 907, Vagharshapat)

The Patriarch of All Armenians since 1892.

A remarkable spiritual and special activist who served with devotion and was a strong supporter and defender of national interests. A true champion of freedom and of spiritual and cultural enlightement of the homeland; as well as a noted reformer of the Armenian Church. Earned the title of "Khrimyan Hayrik" (Papa Khrimyan) for patriotism and devotion to people.

Տ. Մատթէոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլեան (1845 թ., Կ. Պոլիս - 1910 թ., Վաղարշապատ)

1908 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

1886-1890 թթ. Եգիպտոսի հայ թեմի առաջնորդն էր, իսկ 1894-1896 թթ-ին և 1908 թ-ին՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքը: Իր հաստատակամության համար կոչվել է «Երկաթյա պատրիարք»:

His Holiness Mattheos II Izmirlian of Constantinople (1845, Costantinople - 1910, Vagharshpat)

The Patriarch of All Armenians since 1908.

From 1886-1890 served as diocesan primate in Egypt. In 1894-1896 and in 1908 served as the Armenian Patriarch of Constantinople. Earned the title of "Yerkatya Patriarch" (Iron Patriarch) for his determination.

Տ. Գևորգ Ե Տփղիսեցի Սուրէնեանց (1847 թ., Թիֆլիս - 1930 թ., Վաղարշապատ)

1911 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու մի շարք թեմերի առաջնորդն էր և ամենուր հոգացել է ժողովրդի հոգևոր և մտավոր դաստիարակության, եկեղեցիների բարեկարգման մասին:

His Holiness Gevorg V Sureniants of Tpghis (1847, Tiflis - 1930, Vagharshapat)

The Patriarch of All Armenians since 1911.

Served as primate for a number of dioceses of the Armenian Apostolic Church. Took a devoted care of spiritual and intellectual education of the people as well as spent efforts to recover churches.

Տ. Խորեն Ա Մուրադբէգեան (1873 թ., Թիֆլիս - 1938 թ., Վաղարշապատ)

1932 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

Հոգևոր եռանդուն գործունեություն է ծավալել Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Երևանի թեմի Եղբայրական օգնության կոմիտեի նախագահն էր:

His Holiness Khoren I Muradbegian (1873, Tiflis - 1938, Vagharshapat)

The Patriarch of All Armenians since 1932.

An active clergyman in New Bayazet (present-day Gavar, Armenia). During World War 1, he chaired the Fraternal Aid Committee of the Yerevan Diocese.

Տ. Գևորգ Զ Չորեքչեան (1868 թ., Նոր Նախիջևան - 1954 թ., Էջմիածին)

1945 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

Խորեն Ա Մուրադբէգեանի եղերական մահից հետո ղեկավարել է Հայ եկեղեցու գործերը, առա՝ 1941-1945 թթ. Կաթողիկոսի տեղապահ:

His Holiness Gevorg VI Chorekchian (1868, Nor Nakhijevan - 1954, Etchmiadzin)

The Patriarch of all Armenians since 1945.

Governed the affairs of the Armenian Church after the tragic death of Khoren I. During the National Ecclesiastical Assembly in the period 1941-1945, was elected as pontifical vicar general.

Տ. Վազգէն Ա Պալճեան (1908 թ., Բուխարեստ - 1994 թ., Էջմիածին)

1955 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

1930-ական թթ-ից ազգային-հասարակական, առա եկեղեցական եռանդուն գործունեություն է ծավալել ռումինահայ գաղութում: Ի գնահատություն տասնամյակների հոգևոր-եկեղեցական և գիտամշակութային վաստակի՝ 1991 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, առաջինն է արժանացել Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչման (1994 թ.) և Հայրենիքի շքանշանի:

His Holiness Vazgen I Palchian (1908, Bucharest - 1994, Etchmiadzin)

The Patriarch of All Armenians since 1955.

Starting 1930´s, was engaged in national and civic activities, and thereafter actively led pastoral life in the Armenian community of Romania. In appreciation of all achieved in spiritual, pastoral, national, academic and cultural activities, was elected as an Honorable Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia and was the first recipient of the highest award of the country - the order of National Hero of Armenia in 1994.

Տ. Գարեգին Ա Սարգիսեան (1932 թ., Քեսաբ (Սիրիա) - 1999 թ., Էջմիածին)

1994 թ-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

Ուսանելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում՝ ձեռնադրվել է կուսակրոն և դարձել Կիլիկիո միաբանության ուխտի անդամ: Ուսումնառությունը շարունակել է Օֆֆորդի համալսարանում: Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի հանդիսությունների շրջանակում 1997 թ. կատարել է Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հիմնարկեքը:

His Holiness Garegin I Sarkisian (1932 in Kessab (Syria) - 1999, Etchmiadzin)

The Patriarch of All Armenians since 1994.

Having studied in the seminary of the Great House of Cilicia, was ordained as a celibate priest and became a member of the Brotherhood of Cilicia. Continued his studies at Oxford University. Within the framework of celebrations of the 1700th anniversary of adoption of Christianity as state religion in Armenia, personally offered the blessing of the foundation service for the Cathedral of St Gregory the Illuminator in Yerevan in 1997.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ARMENIAN HISTORY



Երկրաշարժի 10-ամյակ

Հուշադրամը նվիրված է 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի 10-ամյակին:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ եկեղեցու, ճանդված շինությունների և երկրաշարժի ժամը ցույց տվող ժամացույցի պատկերները՝ Հայաստանի քարտեզի ֆոնի վրա:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1998:

Անվանական արժեքը	10 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	արծաթ, 999⁰
Քաշը	31,1 գ
Տրամագիծը	38,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ, համարակալված
Տպաքանակը	1 000 հատ





10th Year of the Earthquake

The coin is dedicated to the 10th year of the devastating earthquake in Armenia on 7 December, 1988.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the images of a church, destroyed buildings and the standing watch showing the time of the earthquake - against the background of the map of Armenia.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1998.

Nominal value	10 dram
Metal and alloy	silver, 999⁰
Weight	31,1 g
Diameter	38,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	1 000 pcs





Տիգրան Մեծ

Հուշադրամը նվիրված է հայոց Արտաշեսյան հարստության Տիգրան Մեծ արքային (Ք. ա. 95-56 թթ.):

Դիմերես՝ Տիգրան Մեծ արքայի արծաթե դրամի դարձերեսի պատկերը և ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Տիգրան Մեծ արքայի արծաթե դրամի դիմերեսի պատկերը՝ արքայի կիսադեմը:

Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 1999:

Անվանական արժեքը	50 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	ոսկի, 900⁰
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	հարթ, համարակալված
Տպաքանակը	500 հատ

Tigran the Great

The coin is dedicated to Tigran the Great - Armenian King of the Artashesian dynasty (95-56 BC).

Obverse: an image taken from reverse of the silver coin circulated under the reign of Tigran the Great, and the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the profile of the King taken from obverse of the same silver coin.

Designed by Hrachya Aslanyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 1999.

Nominal value	50 000 dram
Metal and alloy	gold, 900⁰
Weight	8,6 g
Diameter	22,0 mm
Quality	proof
Edge	even, numbered
Quantity	500 pcs





Տիգրան Մեծ

Հուշադրամը նվիրված է հայոց Արտաշեսյան հարստության Տիգրան Մեծ արքային (Ք. ա. 95-56 թթ.):

Դիմերես՝ Տիգրան Մեծ արքայի արծաթե դրամի դարձերեսի պատկերը և ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Տիգրան Մեծ արքայի արծաթե դրամի դիմերեսի պատկերը՝ արքայի կիսադեմը:

Էսքիզների հեղինակներ՝ Կարապետ Աբրահամյան (դիմերես) և Ավստրիայի դրամահատարանի նկարիչներ (դարձերես):

Հատվել է Ավստրիայի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2003:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 585⁰
Քաշը	15,553 - 15,853 գ
Տրամագիծը	26,0 մմ
Որակը	սովորական
Դրամատուրքը	հարթ
Տպաքանակը	500 հատ

Tigran the Great

The coin is dedicated to Tigran the Great - Armenian King of the Artashesian dynasty (95-56 BC).

Obverse: an image taken from reverse of the silver coin circulated under the reign of Tigran the Great, and the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the profile of the King taken from obverse of the same silver coin.

Designed by Karapet Abrahamyan (obverse) and the Austrian Mint artists (reverse).

Minted in the Austrian Mint.

Year of issue 2003.

Nominal value	1 000 dram
Metal and alloy	gold, 585⁰
Weight	15,553 - 15,853 g
Diameter	26,0 mm
Quality	uncirculated
Edge	even
Quantity	500 pcs

Պետբանկի 110-ամյակ

Հուշադրամը նվիրված է Հայաստանում Պետական բանկի հիմնադրման 110-ամյակին և ՀՀ ազգային արժույթի թողարկման 10-ամյակին:

Դիմերես՝ ՀՀ կենտրոնական բանկի շենքը:

Դարձերես՝ վարդյակի տեսքով զարդանախշ և տարեթվեր՝ «1893», «1993» և «2003»:

Էսքիզների հեղինակ՝ Կարապետ Աբրահամյան:

Հատվել է Սանկտ Պետերբուրգի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2003:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	33,92 գ
Տրամագիծը	39,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	ատամնավոր
Տպաքանակը	300 հատ





110th Anniversary of the State Bank

The coin is dedicated to the 110th anniversary of establishment of the State Bank in Armenia and to the 10th anniversary of introduction of the national currency.

Obverse: the building of the Central Bank of Armenia.

Reverse: a rosace ornament and three dates: 1893, 1993 and 2003.

Designed by Karapet Abrahamyan.

Minted in the Mint of St. Petersburg.

Year of issue 2003.

Nominal value	100 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	33,92 g
Diameter	39,0 mm
Quality	proof
Edge	ribbed
Quantity	300 pcs

ՀՀ վճռաբեկ դատարանի 10-ամյակ

Հուշադրամը նվիրված է ՀՀ վճռաբեկ դատարանի ստեղծման 10-ամյակին: Վճռաբեկ դատարանը Հայաստանի դատական իշխանության բարձրագույն ատյանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունն ամբողջ երկրում:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ հունական արդարադատության աստվածուհու՝ Ֆեմիդայի արձանը:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

Հատվել է Չեխիայի դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2008:

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900⁰
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ



10th Anniversary of the Court of Appeal

The coin is dedicated to the 10th year of creation of the Court of Appeal of the Republic of Armenia. The Court of Appeal is the superior authority of judicial system of the Republic of Armenia, which is called to ensure a standardized administration of the law all over the country.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the statue to Themis, the Greek goddess of the justice.

Designed by Eduard Kurghinyan.

Minted in the Czech Mint.

Year of issue 2008.

Nominal value	10 000 dram
Metal and alloy	gold, 900⁰
Weight	8,6 g
Diameter	22,0 mm
Quality	proof
Edge	ribbed
Quantity	500 pcs





Անի - 1050

Հուշադրամը նվիրված է Անիի Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք հռչակելու 1050-ամյակին: Անին Հայաստանի 11-րդ մայրաքաղաքն է: Հիմնադրվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում՝ Ախուրյան և Անի գետերի միախառնման տեղում: Բագրատունիները իրենց արմունիքը 961 թ. Կարսից փոխադրել են Անի և այն հռչակել մայրաքաղաք:

Դիմերես՝ Անի հաղաքի դարպասներից մեկի վրա պահպանված հաղաքի զինանշանը՝ հովազի պատկերով, և հավերժությունը խորհրդանշող վարդյակ:

Դարձերես՝ Անիի Մայր տաճարը:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2011:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	ոսկի, 585⁰
Քաշը	15,6 գ
Տրամագիծը	26,0 մմ
Որակը	հատուկ
Դրամատուրքը	հարթ
Տպաքանակը	1 000 հատ

Ani - 1050

The coin is dedicated to the 1050th anniversary of announcing Ani as a capital of Bagratuni Armenia, the 11th capital of Armenia. Ani was established at the junction of Ani and Akhurian rivers in Shirak province of Ayrarat region of Mets Hayq ("Greater Armenia"). In 961 the Bagratuni Royal Dynasty moved from Kars to Ani and proclaimed it to be the capital.

Obverse: the symbol of a panther, the Emblem of Ani, which remained preserved on one of its gates, and a round rosace symbolizing eternity.

Reverse: the Mother Temple of Ani.

Designed by Eduard Kurghinyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 2011.

Nominal value	1 000 dram
Metal and alloy	gold, 585⁰
Weight	15,6 g
Diameter	26,0 mm
Quality	special uncirculated
Edge	even
Quantity	1 000 pcs

Արտաշատ - 2200

Հուշադրամը նվիրված է Արտաշատի հիմնադրման 2200-ամյակին: Արտաշատը Հայաստանի 4-րդ մայրաքաղաքն է: Արտաշատը հիմնադրել է Արտաշես Ա Հայոց թագավորը Արաքսյան դաշտում՝ Երասխ և Մեծամոր գետերի միախառնման տեղում: Արտաշատը միջազգային առևտրի խոշոր կենտրոն էր, որի դերը մեծացել է 1-2-րդ դարերում՝ Հռոմի և Արևելքի միջև առևտրային կապերի ընդլայնման շնորհիվ:

Դիմերես՝ Արտաշատ մայրաքաղաքի դիցուհին՝ Տիխվեն, աշտարակաձև թագով:

Դարձերես՝ հաղթության դիցուհի Նիկեի դիմանկարը:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

Հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2011:

Անվանական արժեքը	1 000 դրամ
Մետաղը և համաձուլվածքը	ոսկի, 585⁰
Քաշը	15,6 գ
Տրամագիծը	26,0 մմ
Որակը	հատուկ
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	1 000 հատ

Հուշադրամը ներկայացվել է «Դրամների համաստեղություն-2012» 6-րդ միջազգային մրցույթին (ՌԴ) և զբաղեցրել երրորդ տեղը՝ «Տարվա հուշադրամը» անվանակարգում:



Artashat - 2200

The coin is dedicated to 2200th anniversary of foundation of Artashat, the 4th capital of Armenia. Artashat was founded by the Armenian king Artashes A in the Ararat Valley at the junction of Yeraskh and Metsamor rivers. Artashat has been a hub of international trade, with its role having increased in the 1-2 centuries thanks to extended trade relations between Rome and the East.

Obverse: Tikhve - Goddess of Artashat - with the crown in the form of a tower.

Reverse: the portrait of Nike - goddess of victory.

Designed by Eduard Kurghinyan.

Minted in the Royal Dutch Mint.

Year of issue 2011.

Nominal value	1 000 dram
Metal and alloy	gold, 585⁰
Weight	15,6 g
Diameter	26,0 mm
Quality	special uncirculated
Edge	even
Quantity	1 000 pcs

In the 6th international competition "Coin Constellation-2012" (RF) the coin won the third place in the nomination "Coin of the Year".



Նոյյան տապան

Հուշադրամները նվիրված են Նոյյան տապանի մասին բիբլիական սյուժեին:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Նոյյան տապանը, սպիտակ աղավնին՝ ձիթենու ճյուղը կտցին, և Արարատ լեռը՝ արևածագի ֆոնին:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

Հատվել են Գերմանիայի «Geiger Edelmetalle» դրամահատարանում:

Թողարկման տարեթիվը՝ 2012:

Անվանական արժեքը	100 / 200 / 500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999⁰
Քաշը	7,77 / 15,55 / 31,1 գ
Տրամագիծը	20,18 / 27,66 / 38,60 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ընդհատվող ատամնավոր, համարակալված
Տպաքանակը	2 000 հատ յուրաքանչյուր տեսակից

Noah's Ark

The coins are dedicated to the biblical story about the Noah's Ark.

Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the Noah's Ark, a white dove with an olive branch in the beak and the Mountain Ararat at the sunrise.

Designed by Eduard Kurghinyan.

Minted in the Geiger Edelmetalle GmbH, Germany.

Year of issue 2012.

Nominal value	100 / 200 / 500 dram
Metal and alloy	silver, 999⁰
Weight	7,77 / 15,55 / 31,1 g
Diameter	20,18 / 27,66 / 38,60 mm
Quality	proof
Edge	interrupted ribbed, numbered
Quantity	2 000 pcs per type

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ARMENIAN FLORA AND FAUNA



Բուսական աշխարհ
Flora





Ծիրան

Հուշադրամը նվիրված է հայկական մրգերից մեկին՝ ծիրանին:
Դիմերես՝ ՀՀ զինանշանը:
Դարձերես՝ ծիրան՝ տերևի ֆոնի վրա:
Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:
Հատվել է Մեծ Բրիտանիայի արքայական դրամահատարանում:
Թողարկման տարեթիվը՝ 1994:

Անվանական արժեքը	25 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925⁰
Քաշը	28,28 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	պրուֆ
Դրամատուրքը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 10 000 հատ

Apricot

This coin is dedicated to apricot - one of the Armenian fruits.
Obverse: the coat of arms of the Republic of Armenia.
Reverse: apricot against the background of a leaf.
Designed by Hrachya Aslanyan.
Minted in the Royal Mint, Great Britain.
Year of issue 1994.

Nominal value	25 dram
Metal and alloy	silver, 925⁰
Weight	28,28 g
Diameter	38,61 mm
Quality	proof
